



**ԴԻԼԻՋԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՍՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
(ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ)**

Հասցե. ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55

Հեռ. (094) 763 594, E-mail info_dilijan@aarhus.am, albertharoyan@rambler.ru

№ Ե-002/14

15 -ը ապրիլի 2014թ.

**ՀՀ ԱՆ ՊՀՀ Տավուշի մարզային կենտրոնի
պետ պարոն Բագրատ Թումանյանին**

**Դիլիջանի Օրհուս կենտրոնի համակարգող
Ալբերտ Հարոյանից**

Հարգելի պարոն Թումանյան

Սույն թվականի ապրիլի 8-ին Դիլիջան համայնքի բնակիչները ահազանգել էին ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ և ԱՆ ՊՀՀ Տավուշի մարզային տեսչություն՝ համայնքի խմելու ջրի վատ որակի համար, որին արձագանքելով, ձեր ծառայության աշխատակիցները ապրիլի 9-ին համայնքի բնակիչների բնակարաններից վերցրել են ջրի փորձանմուշներ՝ այն ստուգելու համար:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները խնդրում եմ Դիլիջանի Օրհուս կենտրոնին տրամադրել այդ փորձաքննության արդյունքների մասին տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ՝ 5-օրյա ժամկետում:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Դիլիջանի օրհուս կենտրոնի համակարգող

Ալբերտ Հարոյան